

ԽՈՍՔԻ ՄԱՍՆՐԻ ԿԱՂԱՊԱՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Դ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը բառային միավորների¹ խմբավորումն է ըստ նախադասություն կազմող և լրացնող կաղապարների մեջ նրանց գրաված որոշակի դիրքերի (բաշխման)։ Ի տարբերություն նախադասության անդամների՝ այս դեպքում բացառվում են կրկնվող տարրերը, և հաշվի չեն առնվում նախադասության մեջ առանձին շարույթ կազմող բառերի ու բառակապակցությունների ենթակա-խնդրային ու պարագայական գործառությունները։ Նախադասություն կազմող («լիմաստ») խոսքի մասերի առանձնացման համար փաստորեն հիմք է տալիս ծավալուն բալանան բառակապակցությունը, մյուս խոսքի մասերը որոշվում են ըստ նախադասության և այն կազմող խոսքի մասերի հետ ունեցած առնչության։

Որքան մեղ հայտնի է, խոսքի մասերի կաղապարային դասակարգման սկզբունքը լեզվաբանության մեջ որպես այդպիսին հստակորեն ձևակերպվում է առաջին անգամ։ Այդ սկզբունքը հնարավորություն է տալիս խուսափելու մյուս սկզբունքների միակողմանիությունից և բառերը քննելու իմաստաբերականակա բոլոր հատկանիշների ամբողջության մեջ։ Ըստ կաղապարային բաշխման առանձնացված խմբերը հիմնականում զործառական բնույթի են, բայց բառակապակցության կառուցվածքի նոր ըմբռնումը հնարավորություն է տալիս որպես ինքնուրույն խոսքի մասեր առանձնացնելու նաև այնպիսիները, որոնք «զուտ» գործառական-շարահյուսական սկզբունքի դեպքում չեն առանձնացվում (հմտ. թվականը)։ Միաժամանակ, այս սկզբունքը հնարավորություն է տալիս բառային միավորները բնութագրելու բաղադրականիորեն, գործառականի հետ միասին հաշվի առնելու նաև իմաստային-իմաստաբանական, ձևաբանական-կատեգորիական, բառակազմական հատկանիշները, վերջին հաշվով՝ խոսքի մասերը դիտելու բառա-իմաստային ու քերականական հատկանիշների ամբողջության մեջ, տարբերակելու հիմնական և երկրորդական գործառությունները, խուսափելու միակողմանիությունից, հաշվի առնելու լեզուների առանձնահատկությունները և, վերջապես, հեշտացնելու դրանց ուսուցումը։

Ի տարբերություն մեր «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» դրքի՝ այստեղ խոսքի մասերը չեն քննվում ըստ արտաքնապես կարծեք իրար հետ չկապված՝ մանրատված կաղապարների, այլ դրանք ի մի են բերվում մեկ միասնական կաղապարի մեջ, բացառվում են կաղապարային դասակարգումից կատարվող շեղումները, մի կողմ է թողնվում ձևաբանական

¹ Մենք տարբերում ենք բառերը բառային միավորներից, որոնք կարող են կազմված լինել մեկ բառից և խոսքի մասային միենույն գործառությունը միասին արտահայտող մեկից ավելի բառերից՝ հաց, կաւմիւր, երեւի, հագիվ, քե. և՛—և՛. ոչ միայն—այլև, ճիշտն ասած. մի խոսքով և այլն։

չափանիշներից ելնող (բառերի հոլովվելն ու խոնարհվելը հիմք ընդունող) դասակարգումը:

Հիշյալ աշխատության մեջ տարբերված է նախադասության երկու պլան՝ հաղորդային և հաղորդակցական կամ, որոշ փոփոխությամբ, օբյեկտիվ և սուբյեկտիվ: Հաղորդային պլանը նախադասության հիմքն է, հաղորդվող բովանդակությունը. այն կարող է լինել ինչպես խոսողի հետ քիչ առնչություն ունեցող մի բան, այնպես էլ խոսողի սուբյեկտիվ ապրումը. սակայն վերջին դեպքում սուբյեկտիվը օբյեկտիվանում է: Հաղորդակցային կամ, ավելի ճիշտ, հաղորդակցա-կոնտեքստային պլանը այն տեղեկությունների ամբողջությունն է, որոնք հանդես են բերում խոսողի՝ հաղորդման հետ կապված զդացմունքները, խոսակցի և հաղորդման նկատմամբ նրա վերաբերմունքը, հաղորդման նրա գնահատումը և հարաբերումը կոնտեքստին: Սրանք հաճախ, ինչպես կոնսենսը, կարելի է դիտել որպես զգացական, կամային, իմացական բնույթի բայերով արտահայտված նախադասությունների յուրատեսակ փոխակերպումներ (վա՛յ←ես ցավ եմ զգում և այլն):

Քանի որ մեզ հետաքրքրում է բառային միավորների դասակարգումը, սովյալ դեպքում հաշվի չենք առնի, որ հաղորդակցային պլանի հետ կապված տեղեկությունները կարող են հանդես դալ նաև ոչ բառային միջոցներով՝ ենթակայի ընտրությամբ, բայեղանակով, շարահասության միջոցներով, ժեստերով ու միմիկայով և այլն: Նախադասության հաղորդային պլանն իրականացնող բառային միավորների կաղապարը կազմելիս կվերանանք ոչ բառային միջոցներով իրականացվող հաղորդակցային տարրերի առկայության և բացակայության փաստերից²: Դերանունները, բնականաբար, կքննարկվեն որպես հաղորդման տարրեր. կապված լինելով հաղորդակցային և կոնտեքստային իրադրության հետ՝ դերանունները ծառայում են հաղորդման տարրերը սրանք հետ հարաբերելուն, լրացուցիչ կերպով ցույց տալիս, որ հաղորդման մասնակիցները հաղորդակցողներն են, մասնակիցների հատկությունները որոշում ըստ հաղորդակիցների դիրքի և այլն:

Ամեն մի նախադասության հիմքում ընկած է իրականության մեջ տրված կամ հաղորդողի (արտահայտողի) կողմից հաստատվող որևէ հարաբերություն, որի բաղադրիչները բառապես կամ քերականորեն կարող են լրիվ տրված չլինել, և որ կազմում է նրա լայսպես կոչված «խորքային կառույցը»³: Եթե մեր նպատակին համապատասխան վերցնենք բառային լիակատար արտահայտություն ունեցող նախադասություն, ապա նրա ստորոգյալը հանդես կգա որպես միաժամանակ և՛ վիճակի, և՛ հարաբերության արտահայտիչ, ընդ որում հարաբերությունը լինում է երկու տիպի՝ ենթակայի և նրա վիճակային հատկանիշի հարաբերություն (ստորոգում) և նախադասության մեջ նկատի առնվող կամ արտահայտվող առարկաների հարաբերություն: Քանի որ՝ նա-

² Այսպես, Լյրե-ն ենթադրականություն է արտահայտում, բայց մտնում է հաղորդման մեջ, որովհետև Լյրե-ն նախադասության կառուցվածքի անհրաժեշտ տարր է և այլ դեպքերում կարող է փոխարինվել օբյեկտիվ իրականությունն արտահայտող բառերով:

³ Իրականում Ն. Խոմսկու կողմից կաղապարի բնությունը լայսպես կոչված բազիսին վերադրվող $S \rightarrow NP + VP$ բանաձևից սկսելը, ըստ որի նախադասությունը անվանական և բայական խմբերի շղթայակցումն է, ճիշտ չէ. խորքային կառույցը իրականության արտացոլումն է, և «անվանական խումբն» ու օբյեկտային խումբը՝ մակերեսային կառույցի գրանցումները:

խաղաասության կազմում առաջինը պարտադրաբար մտնում է երկրորդի մեջ (բայց ոչ հակառակը) և դիմավոր բայի դերբայական փոխակերպման դեպքում ստորոգման արտահայտությունը վերանում է, իսկ առարկաների հարաբերության արտահայտությունը պահպանվում, նախադասության հաղորդային պլանի կաղապարի կառուցման մեջ նկատի կառնենք երկրորդ տիպի բայերը՝ առաջինները դիտելով որպես դրանց բաղկացուցիչ Այսպիսով, նախադասության բառային համեմատաբար լրիվ արտահայտման դեպքում կունենանք մի նախադասություն, որտեղ առկա է առարկայանիշ անվանական (զոյականական) բառակապակցություններն հարաբերող բայ՝ իր էության հետ կապված լրացումներով հանդերձ։ Բայն ըստ արժույթի կարող է հարաբերել երկու և ավելի անվանական բառակապակցություններ, բայց նախ՝ դրանցից մեկը բավարար է անվանական բառակապակցության կաղապարը քննելու համար, երկրորդ՝ նպատակահարմար է ընտրել դրանցից այն, որը կարող է լինել ամենից ավելի ծավալունը։ Երկրորդ պահանջը ամենից ավելի լավ բավարարում է ոչ թե ենթակա կազմող, այլ որպես բայի լրացում հանդես եկող անվանական բառակապակցությունը։ Վերջինս կարող է ունենալ նաև կապ, որ ենթական չի կարող ունենալ։ ենթակայի գործառություն ունեցող բառակապակցությունը այս դեպքում կդիտվի որպես կապային կառուցով ուղեկցվող բառակապակցության մասնակի դեպք (դեպի այս երկու գեղեցիկ տեքստ—այս երկու գեղեցիկ տեքստ)։ Այսպիսով, խոսքի մասերի առանձնացման համար հիմք ծառայող հաղորդային կաղապարի նմուշը կներկայացնի բայական ամենածավալուն կաղապարը՝ բաղկացած բայից (իր բուն լրացումներով), նրա արժույթով պայմանավորված անվանական բառակապակցությունից և ստորադասական հարաբերություններ արտահայտող բառային միավորներից։ Նախորդ ասածներից բխում է, որ խոսքի մասերի առանձնացման նեղ՝ միայն հաղորդային, կաղապարը կառուցելիս պետք է հաշվի առնել առնվազն երկու պայման. 1) կաղապարը պետք է լինի ամենածավալունը, այսինքն՝ պետք է պարունակի բոլոր հնարավոր տարբերակված անդամները. 2) այդ անդամները չպետք է կրկնվեն նույնությամբ, չպետք է փոխարինվեն գործառական համարժեքներով, չպետք է նորից հանդես գան գործառական այլ վերջածանցներով կամ առգանական տարբերությամբ, այսինքն՝ չպետք է լինեն փոխանցման, փոխարինման կամ փոխակերպման արդյունք։ Ինչպես ստորև կտեսնենք, որոշ բառային միավորներ կարող են հանդես գալ որպես իրենց հետ միավորվող միավորների լրացումներ, բայց այդ դեպքերը արդյունք են փոխանցման (համտ. «այս երկու տները» ու «որ երկու տները...», որտեղ ո՞ր-ը առգանական տարբերությամբ փոխել է իր հիմնական գործառությունը)։ Վերևում ասածից բխում է, որ կաղապարների անդամները քննվում են ըստ հիմնական, իրենց էությանը հատուկ, գործառության (հին քերականների հորջորջմամբ՝ ըստ բնության) և ոչ թե ըստ երկրորդական, փոխանցմամբ կամ փոխակերպմամբ պայմանավորված, գործառության (ըստ դրության)։ Այս դեպքում էլ մենք նկատի կառնենք ոչ միայն «լիիմաստ», այլև ոչ «լիիմաստ» բառային միավորները։ Քանի որ ստորադասական շաղկապները հանդես են գալիս հիմնականում դիմավոր բայերի դեպքում, ուստի ելակետային կլինի դիմավոր բայի ծավալուն բառակապակցությունը, որ բավարար է նախադասությունը կառուցող բառային «լիիմաստ» միավորներն առանձնացնելու համար։ Սակայն մենք պետք է առանձնացնենք

նաև ոչ «լիիմաստ» տարրերը հնարավոր լրիվությամբ՝ բառային բոլոր հնարավոր միավորներն ընդգրկելու նպատակադրմամբ, մի բան, որ բոլոր դասակարգողների կողմից հաշվի չի առնվում (մնում են խոսքի մասերի մեջ չընդգրկված միավորներ): Այս նպատակադրմամբ վերցնենք 1) մի նախադասություն, որ ունի այլ նախադասությունների (այդ թվում՝ թե՛ պարբերության և թե՛ բարդ նախադասության կաղմի մեջ մտնող նախադասությունների) հետ կապակցող բառային միավորներ (հարաբերիչներ), 2) նախադասության կաղմում տարբեր միավորներին ուղեկցող և քերականական մասնիկների արժեք ունեցող տարրեր: Որպեսզի պարզ լինի այս ընտրության բնույթը, նախ վերցնենք հիմք ծառայող նախադասությունը իր հետ կապված նախադասություններով և կրկնվող տարրերով, ապա դրանցից ընտրենք կաղապարային նմուշը.

1. Լուր ստացվեց, որ փախստակացներն ապաստանել են երկու շատ մեծ և բազմամարդ ֆաղաֆներում: Այսպիսով, եթե Գրիգորյանը փախստակացներից ավելի արագ շարժվեր դեպի այդ երկու շատ մեծ ֆաղաֆները, և ամեն ինչ խիստ գաղտնի կատարվեր, ապա հույս կլիներ օպերացիան հաջողությամբ ավարտելու:

2. Այսպիսով, եթե ավելի արագ շարժվեր դեպի այդ երկու շատ մեծ ֆաղաֆները և...

Այս գործողության ժամանակ մենք հանեցինք 1) պարբերությունը կաղմող երկու նախադասություններից առաջինը (նրա մասին ակնարկում է այսպիսով բառը), 2) բարդ նախադասության մեջ մտնող գլխավոր նախադասությունը (ստորադասության մասին ակնարկում է եթե-ն), 3) համաստորադաս նախադասություններից երկրորդը (նրա մասին ակնարկում է և-ը), 4) նշված նախադասության մեջ մտնող երեք գոյականական միավորներից երկուսը (երկրորդի համեմատության խնդրի մասին ակնարկում է ավելի-ն): Ստացված կաղապարային նմուշը բաղկացած է տասներկու անդամից, որոնցից հինգը հարաբերիչներ են (սրանք արտահայտում են նախադասությունների կամ դրանց անդամների միջև սահմանվող զանազան կարգի հարաբերություններ և ենթադրում են առնվազն երկու հարաբերող կողմ՝ այսպիսով, եթե, ավելի, դեպի, և), վեցը՝ հարաբերվողներ (սրանք դասակարգում և դասակարգվող միավորները այս կամ այն հատկանիշով տարբերում ու միավորում են՝ արագ, այդ, երկու, շատ, մեծ, ֆաղաֆներ), մեկը՝ և՛ հարաբերող, և՛ հարաբերվող (շարժվեր): Ընդունված է առաջին հինգը կոչել ոչ «լիիմաստ», մյուսները՝ «լիիմաստ» բառային միավորներ: Վերջինները հանդես են գալիս որպես նախադասության անդամներ, առաջինները՝ ոչ:

«Լիիմաստ» բառային միավորներից վեցը ավանդաբար հայտնի են որպես մակբայ (արագ), բայ (շարժվեր), դերանուն (տվյալ դեպքում՝ դերանվանական որոշիչ կամ, ինչպես ավանդաբար ասվում է, «դերանվանական ածական»՝ այս), թվական (տվյալ դեպքում՝ թվականական որոշիչ կամ ինչպես ընդունված է ասել, թվականական ածական՝ երկու), ածական (մեծ) և գոյական (ֆաղաֆներ). յոթերորդը (շատ), որ հանդես է գալիս որպես մեծ բառի լրացում, հետազոտողների կողմից սովորաբար չի առանձնացվում որպես հատուկ խոսքի մաս, այլ միավորվում է մակբայի հետ որպես վերջինիս տարատեսակ: Ինչպե՞ս վարվել: Այս հարցը լուծելու համար պետք է նկատի առնել նախ՝ գոյականի ու բայի փոխհարաբերության բնույթը և երկրորդ՝ կաղապարում դրանց ստորադասվող բառային միավորների (մակբայի, թվականի,

ածականի)⁴ լրացումների փոխհարաբերությունը միմյանց և բուն մակբայ-
ների նկատմամբ:

Բայի և գոյականի փոխհարաբերության հարցը քերականության մեջ լուծ-
վում է երեք կերպ. 1) բայը (դիմավոր բայը) ստորադասվում է գոյականին.
փորձ է արվում այս սկզբունքը հիմնավորել իմաստաբանորեն (գոյականը հա-
մարվում է առարկայի, բայը՝ հատկանիշի նշանակում)⁵ և գործառնական (բա-
յը դիտվում է որպես նախադասության մեջ գոյական-ենթակայի հատկանիշի
արտահայտիչ, որ համաձայնում է նրա հետ և փաստորեն այն լրացնում):
2) Գոյականն ստորադասվում է բային որպես նրա արժույթի դրսևորում, այ-
սինքն՝ որպես նախադասության հիմքում ընկած հարաբերությունն արտահայ-
տող բայի լրացում: Մեր ընտրած կաղապարային նմուշում կարծես թե այդ
սկզբունքը հաստատվում է՝ գոյականն իր լրացումներով հանդերձ ստորա-
դասվում է բային, հանդես դալիս որպես նրա լրացում, քերականորեն մտնում
բայական բառակապակցության մեջ. սակայն պետք է նկատի առնել, որ այդ
նմուշը կաղապարի մասնակի (թեև համեմատաբար լիանդամ) դրսևորումնե-
րից (իրացումներից) մեկն է, եթե գոյականական բառակապակցությունը
քննենք վերացական և ընդհանրացված ձևով՝ ըստ կաղապարի, այսինքն՝
նկատի առնենք նրա բոլոր հնարավոր գործառնությունները (այդ թվում՝ են-
թակայական գործառնությունը), ապա դժվար չի լինի համոզվել, որ այդպիսի
ստորադասության մասին խոսք չի կարող լինել (գոյականը որպես ենթակա
հանդես է դալիս լրացյալի, իսկ որպես խնդիր՝ լրացման դերում): 3) Գոյա-
կանը և բայը հավասարազոր, ըստ հանգամանքների մեկը մյուսին ստորա-
դասվող և իրար լրացնող բառային միավորներ են, որոնց համար կա՞մ գերա-
դասության հարց չպետք է դնել, կա՞մ գերադասությունը կապել գործառնակա-
նի փոփոխականի տարբերությունների հետ. շարահյուսական շրջապատի փո-
փոխությանմբ, փոխակերպմամբ, փոխարինմամբ մերթ բայը կարող է հանդես
դալ որպես գոյականի, մերթ գոյականը՝ որպես բայի ակնհայտ լրացում
(հմտ. «Գրիգորը քայլում է»—«Քայլում է Գրիգորի հետ», «Քայլում է Գրի-
գորը»—«Քայլող Գրիգորը», «Գրիգորը քայլում է»—«Գրիգորի քայլելը», «Մե-
նակ եկավ»—«Գրիգորի հետ եկավ» և այլն):

Գոյականի և բայի փոխհարաբերության տարբեր լուծումները համապա-
տասխանաբար կտան կաղապարային կարգերի հիերարխիական տարբեր սխե-
մաներ. առաջին սկզբունքով բայը կգրվի թվականի և ածականի հետ միեւնույն
մակարդակին, և մակբայը, մակթվականն ու մակածականը հանդես կգան
որպես լրացումների լրացումներ: Այս սկզբունքով է, որ հիմնական գործա-
ռությամբ լրացումների լրացումներ հանդիսացող բոլոր բառերը որակվում են
«մակբայ» ընդհանուր անունով: Այս սխեման ճիշտ կլինի, եթե նախ՝ հաս-
տատվի մակբայների, մակթվականների ու մակածականների գործառնական ու
դասահատկացական (միեւնույն դասին պատկանելու) ընդհանրությունը, և
երկրորդ՝ ժխտվի մակբայի հատուկ լրացում (առմակբայ) տարբերելու ան-
հրաժեշտությունը (այսինքն՝ առմակբայը համարվի մակբայի տարատեսակ,
որ երկրորդաբար ստանում է առմակբայական գործառնություն): Երկրորդ

⁴ Գերանունը իր բնույթի համաձայն չունի հատուկ լրացում:

⁵ Ըստ հին քերականների՝ անունը «գոյության» նշանակիչ է, բայը՝ «պատճառ» (հմտ.
Н. А. Дюверней, Французский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 163).


սկզբունքով գոյականը կդրվի մակբայի մակարդակին, և թվականն ու ածականը կդիտվեն որպես լրացման լրացումներ. այս սխեման չի արդարացնում իրեն ոչ առմակբայը որպես հատուկ խոսքի մաս առանձնացնելու, ոչ էլ մակբայի դասին հատկացնելու դեպքում. առաջին դեպքում առմակբայը կդրվի թվականի ու ածականի մակարդակին, երկրորդ դեպքում ավելի բարձր մակարդակի պատկանող մակբայը հանդես կգա միաժամանակ և՛ որպես գերադաս մակարդակի բառային միավորի (բայի), և՛ որպես ստորադաս մակարդակի միավորների (թվականի և ածականի) լրացում: Երրորդ սկզբունքով գոյականն ու բայը կդրվեն միևնույն մակարդակին, և մակբայը, թվականն ու ածականը հանդես կգան լրացական միավորների մակարդակում. այս սխեման իրեն կարդարացնի, եթե ապացուցվի մակբայների լրացումները առանձնացնելու նպատակահարմարությունը, և իրեն չի արդարացնի, եթե այդ բանը չապացուցվի (մակթվականն ու մակածականը համարվեն մակբայի տարատեսակ): Այսպիսով, 1) երկրորդ մոտեցումը առաջ է բերում անլուծելի հակասություններ (նույն խոսքի մասը հանդես է գալիս միաժամանակ տարբեր մակարդակներում), 2) առաջինը արդարանում է, եթե մակթվականն ու մակածականը մակբայի տարատեսակներ են, և չի արդարանում, եթե դրանք հարաբերակից են մակբայի՝ որպես հատուկ խոսքի մաս առանձնացվող լրացումներին, 3) երրորդ մոտեցումն արդարանում է, եթե ապացուցվում է առաջին մոտեցման անհիմն լինելը: Բոլոր դեպքերում հարցի լուծումը կախված է առմակբայի առանձնացման և սրա՝ մակթվականի ու մակածականի հետ ունեցած հարաբերության հարցի լուծումից:

Երեք մոտեցումների փոխհարաբերությունն ակնառու դարձնելու համար արտահայտենք դրանք համապատասխան կախման սխեմաներով՝ յուրաքանչյուրի համար առանձնացնելով երկուական տարբերակ՝ առանց առմակբայի (մակբայը կդրվի ածականի ու թվականի մակարդակին) և առմակբայով (վերջինս կդրվի մակածականի և մակթվականի մակարդակին) (տե՛ս էջ 22)⁶. Նկատի ունենալով դերանվան հատուկ բնույթը (այդ մասին կխոսվի) և հատուկ լրացումներ չստանալը՝ այն առայժմ սխեմաներում չենք ընդգրկի:

Մակթվականի, մակածականի և առմակբայի՝ առանձին խոսքի մաս (խոսքի մասեր) լինելու հարցը լուծելու համար հարկավոր է նկատի առնել հետևյալ հանգամանքները. 1) բերված կաղապարային նմուշի մեջ հանդես եկող շատ բառը հավասարապես կարող է դրվել նաև առաջ մակբայի վրա (շատ արագ), այսինքն՝ ածականը և մակբայը կարող են ստանալ միևնույն լրացումները՝ շատ, մի քիչ, ոչ այնքան. լիովին, առտաֆնապես և այլն: Սրանք կամ չափուքանակական, կամ վերաբերմունքային բնույթի են: 2) Որպես առմակբայ և մակածական հանդես եկող բառային միավորները որոշ դեպքերում ունեն ձևական-բառակազմական տարբերակում. այսպես. կրկին-ը ակնհայտորեն մակբայ է, կրկնակի-ն՝ առմակբայ և մակածական (հմմտ. կրկնակի առաջ, կրկնակի մեծ, բայց ոչ կրկնակի ֆայլեց, այլ կրկին ֆայլեց)՝ իմաստային որոշ տարբերությամբ: 3) Որոշ մակածական-սուբակբայներ կարող են հանդես գալ նաև որպես մակբայներ, բայց նախ՝ միայն առանձին (ոչ բոլոր) բայերի մոտ, երկրորդ՝ հաճախ ոչ բայիմաստն անմիջապես լրացնողի դերում

⁶ Համառոտության համար խոսքի մասերի անվանումները սխեմաներում նշված են տառերով՝ բայ—Բ, գոյական—Գ, մակբայ—Մ, թվական—Թ, ածական—Ա, առմակբայ—ԱՄ, մակթվական—ՄԹ, մակածական—ՄԱ, մակարդակները՝ ընդհանրացված:

(հմմտ. շատ գնաց, իմա՛ շատ տաքածություն, շատ սպասեց, իմա՛ շատ ժամանակ): Քանի որ այս կարգի մակածական-առմակրայնեբր կարող են հանդես գալ նաև որպես գոյականի անմիջական լրացումներ (շատ մաքդ), ուստի և այս դեպքը պետք է համարել անտարորոշության (սինկրետիզմի) դրսևո-



Գծ. 1.

րում (այսպես, ուսերենում շատ գեղեցիկ և շատ մաքդ կապակցություններն արտահայտվում են տարբեր ձևով՝ очень красивый և много людей): 4) Հալերենում կա բառային միավորների մի մեծ խումբ, որ գործածվում է առանց

տարրորշման՝ թե՛ որպես ածական, թե՛ որպես մակբայ. սա ցույց է տալիս, որ խոսողների գիտակցության մեջ երկու կարգի բառային միավորները խոսքի-մասային միենույն մակարդակին են դրվում, համարվում հարաբերակից: Սրանց հարաբերակցությունը նույն կարգի է, ինչ մակածականների և առ-մակբայների հարաբերակցությունը:

Այսպիսով, մեր նշած հնարավոր մոտեցումներից (հմմտ. I և IIIա սխե-մաները) ըստ հայերենի առանձնահատկությունների նպատակահարմար է ընտրել երկրորդը (IIIա), որ համապատասխանում է մեր երկրորդ կադա-պարին: Քանի որ մակածականներն ու առմակբայներն հիմնականում համընկ-նում են, ուստի բաժանումը շատ չմանրատելու նպատակով դրանք կարելի է միացնել մեկ խոսքի մասի մեջ. թեև մակթվականները (մի. մոտավորապես, շուրջ, ընդամենը և այլն) հաճախ սրանցից տարբեր են, բայց նկատի առնելով դործառական ընդհանրությունը և մասնակի համընկնումը (հմմտ. մոտավորա-պես հինգ և մոտավորապես հասկանալի)՝ դրանք ևս կարելի է միացնել նա-խորդներին՝ բոլոր միասին կոչելով մակլրացականներ: Պետք է նկատի առ-նել, որ ինչպես ոչ բոլոր ածականները կարող են դրվել բոլոր գոյականների, և ոչ բոլոր մակբայները՝ բոլոր բայերի վրա, այնպես էլ ոչ բոլոր մակլրացա-կանները կարող են դրվել բոլոր ածականների կամ մակբայների վրա: Այս առումով չափաբանական մակլրացականներն ավելի ընդհանուր բնույթի են, քան վերաբերմունքայինները (հմմտ. շատ գեղեցիկ—առտաֆնապես գեղե-ցիկ. բայց շատ հեռավոր—ոչ առտաֆնապես հեռավոր):

Ավելորդ է նշել, որ շատ գեղեցիկ մաքուր և շատ առագ գնաց բառակա-պակցությունների առաջին երկուական անդամների հարաբերությունը ստո-րադասական է, իսկ այս երկու գեղեցիկ տներ բառակապակցության առաջին կրեք անդամներինը՝ ոչ ստորադասական: Միենույն ժամանակ այն համադա-սական է (անդամների միջև և չի կարելի դնել) և, ի տարբերություն մյուս եր-կու տեսակների, կարելի է կոչել միադասական:

Ոչ «լիիմաստ» բառերի խոսքիմասային արժեքի հարցը քերականության մեջ միանշանակ լուծում չի ստացել. 1) այսպիսով-ի տիպի բառային միա-վորները (այսուհանդերձ, սրա հետ կապված, այս կապակցությամբ, այնու-ամենայնիվ, արդ, հետևաբար, նշանակում է, մի խոսքով, կարճ ասած և այլն) դրվում են ամբողջովին կամ մասամբ եղանակային բառերի (եթե սրանք տար-բերվում են), մակբայների, շաղկապների մեջ. եթե-ի տիպի բառային միա-վորները (թեև, թեպետ, երբ, որ և այլն) և-ի տիպի բառային միավորների (ու, իսկ, կամ, բայց, սակայն և այլն) հետ միասին դիտվում են որպես միենույն «շաղկապ» խոսքի մասի տարբեր դրսևորումներ՝ ստորադասական և համադա-սական շաղկապներ. 3) ավելի-ի տիպի բառերը, որոնք հանդիպում են տարբեր «լիիմաստ» խոսքի մասերի մոտ և կատարում քերականական մասնիկների (վերջավորությունների) դեր, կամ չեն առանձնացվում ու խոսքիմասային արժեքով չեն որոշվում (դիտվում են որպես «լիիմաստ» խոսքի մասերի բա-ղադրիչներ), կամ դրվում են մակբայների և եղանակային բառերի մեջ. սրանք հայերենում հարում են հատկապես գոյականներին, բայերին և ածականնե-րին՝ երբեմն հակադրվելով համապատասխան քերականական մասնիկներին կամ դրանց փոխարինելով (հմմտ. մի մաքուր և մաքուր, ավելի գեղեցիկ և ամե-նագեղեցիկ (գեղեցկագույն), մի՛ մոռանա և մոռացի՛ր, պիտի գնամ և (կ)գնամ և այլն). 4) ղեպի-ի տիպի բառերը գրեթե բոլորի կողմից որակվում են որպես

կապեր և ըստ դիրքի բաժանվում նախադրությունների ու հտադրությունների։ Հազվագեղ միայն հարց է առաջանում այս կամ այն կապի «խսկական» թիւ «անխսկական» լինելու մասին. որոշ բառային միավորներ էլ ումանց կողմից դրվում են խնդրառու ածականների, մյուսների կողմից՝ կապերի մեջ (հմմտ. համապատասխան)։

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը. այսպիսով-ի տիպի բառային միավորները, որպես միջանկյալ բառեր, իրոք հիմք կա միավորելու եղանակային բառերի հետ, բայց բուն արժեքով սրանք կապակցական բնույթ ունեն (կոնտեքստի հետ կապված արտահայտում են տրամաբանական հետևություն, ամփոփում և այլն)։ Պատահական չէ, որ դրանք հաճախ դրվում են շաղկապական բառերի մեջ, մանավանդ որ կարող են հանդիպել գերադաս (գլխավոր) նախադասությունների մեջ, որպես ստորադասական շաղկապներին հարաբերակից բառեր՝ յեւ... այնուամենայնիւ, թեպետ... այնուհանդերձ և այլն։ Այսպիսով, սրանց համար բնորոշ է անկախ կամ գլխավոր նախադասության սկզբում հանդիպելը և նախորդ նախադասության (նախադասությունների) հետ այն կապակցելը, մինչդեռ բուն եղանակականները խոսողի վերաբերմունքի արտահայտիչներ են և դիրքով ավելի անկախուն։ Կարևոր է և այն, որ այսպիսով-ի տիպի բառերը և բուն եղանակականները կարող են հանդիպել նաև կողք-կողքի, ընդ որում նման դեպքերում առաջինները սովորաբար նախորդում են, հազվագեղ նաև հաջորդում (այսպիսով, դժբախտաբար... ցավով սրտի, այսպիսով...)։ Այսպիսի բառերի համար ընդունենք առկա տերմինը։ Ստորադասական և համադասական շաղկապների միացումը ավանդույթից է գալիս. համադասական շաղկապները հակադրվում են ստորադասական շաղկապներին նույն չափով, ինչ չափով կապերին. կոչենք ստորադասական շաղկապը ստորակապ, համադասականը՝ համակապ։ Քանի որ ավելի-ի տիպի բառերը քերականական մասնիկների դեր են կատարում, դրանք կոչենք բառ-մասնիկներ։

Այսպիսով, մենք ունենք ոչ «լիիմաստ» (սպասարկու, օժանդակ) բառային միավորների հինգ տեսակ՝ առկապ, ստորակապ, համակապ, կապ և բառ-մասնիկ։

Ըստ քննարկման նպատակների որոշ փոփոխություններ կատարենք մեր բերած կաղապարային նմուշի մեջ՝ փակագծերի մեջ բերելով մակրացականները, բառ-մասնիկները և առանձին բառերին ուղեկցող համադասական շաղկապները այն բոլոր դեպքերում, երբ դրանք կրկնվում են. կստացվի հետևյալը.

... այսպիսով, եթե ավելի շատ (և...) առագ (և...) պիտի շարժվեր (և...) դեպի այդ (և...) շատ (և...) մեծ (և...) ֆադաֆները (և...) և...

Նմուշից երևում է, որ բոլոր «լիիմաստ» բառային միավորները կարող են մեկից ավելի համադաս միավորների հետ կապվել, թեև մակրացականների շարքում, նրանց բնույթին համապատասխան, սահմանափակումներ են լինում (հմմտ. շատ կամ քիչ առագ, մոտավորապես կամ ընդամենը ճինգ, չստ կամ քիչ մեծ և այլն)։

Իրականում հազիվ թե լինեն այնպիսի նախադասություններ, որոնց մեջ հանդիպեն բոլոր «լիիմաստ» և ոչ «լիիմաստ» բառերը (բոլոր լրացականներն ու մակրացականները)։

Եթե «լիիմաստ» բառերը նշանակենք մեծատառերով և ոչ «լիիմաստները»՝ փոքրատառերով (գծագրում տրված սկզբունքով), «լիիմաստների» մեջ տար-

բերենք երեք աստիճանները և համարակալենք խոսքիմասային խմբերը, կոնենանք հետևյալ կաղապարային բանաձևը⁷.

$$^1ակ + ^2սկ + ^3րմ + (^1U_{11} + ^5կ... +) ^1U_1 + (րմ +) ^5Բ (+^5կ... +) ^6կ + ^7Դ_1 (+^5կ... +) + (^1U_{11} +) ^5Թ_1 (+^5կ... +) ^9U_{11} (+^5կ... +) (րմ +) Ա_1 (-^5կ... +) ^{11}Գ (+^5կ... +) ^{12}Դ_4...$$

Պետք է նկատի առնել, որ 1) գոյականական բառակապակցության դիրքը բուն բայական բառակապակցության նկատմամբ այստեղ ետադաս է, բայց եթե հաշվի առնենք, որ այն ենթակայի գործառութայամբ կարող է նախադասվել, ապա խոսքի մասերը քննելիս կարելի է սկսել գոյականից և նրա լրացումներից. 2) մենք կապի համար ընտրել ենք նախագրություն, որ ավելի ակնառու լինի նրա՝ բայի և անվան հարաբերիչ լինելը, նրանց միջև կապ հաստատելը, բայց ժամանակակից հայերենին ավելի բնորոշ են ետագրությունները:

Հաղորդային միավորների դասակարգում կատարելուց հետո անցնենք այն միավորներին, որոնք ուղեկցում են նախադասությանը կամ մտնում նրա մեջ որպես միջանկյալ բառեր՝ արտահայտելով խոսողի զգացմունքը, կամքը, վերաբերմունքը խոսակցի հաղորդման և իր հաղորդման նկատմամբ, այլև նրա կողմից նախադասության որևէ մասի վերհանումը՝ զիջական կամ սաստկական երանգով. սրանք նախադասություն չեն կազմում և նախադասություններն ու նրանց մասերը չեն կապակցում, այլ ընդհանուր առմամբ եղանակավորում են դրանք. Բաշխական արժեքով հաղորդակցային-կոնտեքստային եղանակավորություն արտահայտող, նախադասություններն ու նրանց մասերը երանգավորող բառային միավորները բաժանվում են երկու խմբի՝ բառային միավորներ, որոնք եղանակավորում են ողջ նախադասությունը, և բառային միավորներ, որոնք երանգավորում են «լիիրմաստ» բառերը: Առաջինները սովորաբար զրվում են նախադասության սկզբում, բայց կարող են զրվել նաև նախադասության մասերի միջև՝ որպես միջանկյալ բառեր ու բառախմբեր: Դրանք ունեն որոշակի հաջորդականություն՝ ըստ Ա՛յս, ո՛չ, բարեբախտաբար... կաղապարային նմուշի⁸, երկրորդները զրվում են այն բառերի վրա, որնք երանգավորում են՝ սաստկացնում, թուլացնում, հարցման տակ դնում կամ ժխտում (նույնիսկ, հեեց, միայն, մի՞թե, արդյո՞ք, ոչ և այլն). բայ-ստորոշյալին վերաբերող բառերը կարող են զրվել նաև ավելի առաջ (հմմտ. «նույնիսկ չխոսեց» և «Եթե նույնիսկ իմ ընկերը չիուսի էլ»): Հարցական բառերը կարող են հանդես գալ նաև առաջին խմբին պատկանող պատասխանական բառերի (այո՞, ո՛չ) փոխարեն՝ սրանց համար բնորոշ դիրքով ու գործառությամբ: Առաջին խմբի բառային միավորները կոչենք ընդհանուր եղանակավորող, երկրորդ խմբինը՝ մասնակի եղանակավորող: Առաջինների մեջ մտնում են զգացական-հորդորական բառերը՝ ձայնարկությունները, պատասխանական բառերը, նախադասությունը խոսողի դիրքերից զնահատող,

⁷ Բացի «լիիրմաստ» բառերի այն կրճատ նշանակումներից, որոնք արդեն բերվել են, օգտագործվում են հետևյալ համառոտումները՝ ակ—առկապ, սկ—ստորակապ, հկ—համակապ, կ—կապ և բմ—բառ-մասնիկ:

⁸ «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքի համեմատությամբ այստեղ համված է կոչականը որպես կրկնվող տարր (որպես հաղորդման կաղապարի մեջ մտնող գոյականի գործառական տարբերակ):

⁹ Երկրորդաբար բուն պատասխանական բառերի գործառությամբ կարող են հանդես գալ նաև բարեբախտաբար-ի տիպի բառերը՝ իմա՛րկե, ան՛ուշտ և այլն:

նրա վերաբերմունքը արտահայտող բառերը: Ձայնարկություններն ու պատասխանականները միշտ առողջական նշաններ ունեն, վերաբերմունքայինները՝ ոչ: Քանի որ երկրորդաբար հարցական բառերը ևս կարող են հանդես գալ այո՝, ո՛չ բառերի դիրքում (նրանց փոխարեն)՝ վերաբերելով խոսակցի ողջ նախադասությանը, և քանի որ պատասխանը կապված է հարցման հետ, ընտրենք պատասխանական-ից ավելի լայն իմաստ ունեցող իմացաբերություն տերմինը: Վերաբերողական-եղանակական բառերի համար ընտրենք եղանակակալ (<եղանակակալ>) տերմինը՝ նրան տալով ավելի նեղ իմաստ: Մասնակի-եղանակավորող բառերի համար գործածենք երանգական տերմինը¹⁰: Ինչպե՞ս տարբերել սրանք մակլրացական բառերից և բառ-մասնիկներից: Երանգականները դրվում են բոլոր «լիիմաստ» բառերի, մակլրացականները՝ ածականների, թվականների և մակբայների վրա, բառ-մասնիկներից յուրաքանչյուրը սովորաբար կապված է մեկ խոսքի մասի հետ: Բնույթով երանգականները մոտ են համակապներին, որոնք մասամբ ծագում են նրանցից և կարող են երբեմն երանգական գործառություն ունենալ (հմտ. «Եվ դու, Բրուտոս»): Երանգական բառերը որոշ առումով ենթադրում են հակադրական նախադասություններ և բառակապակցություններ՝ ոչ ես (այլ մի ուրիշը), մի՞թե դու (և ոչ թե մի ուրիշը), (ոչ միայն ուրիշները. այլև) նույնիսկ ես. (ոչ բոլորը. այլ) միայն ես և այլն:

Ավելի բարդ է դերանվան բնույթի հարցը, որ այստեղ առնված է ըստ գործառական մեկ ենթատեսակի կաղապարային արժևրի. այդ մասին կետավի փոխարկման գաղափարի քննության կապակցությամբ:

Այսպիսով, մենք հայտնում ըստ կաղապարային դասակարգման գույնենանք տասնվեց խոսքի մաս՝ յոթ «լիիմաստ» (որպես նախադասության անգամ հանդես եկող)՝ դոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, մակլրացական, հինգ կապա-հարաբերական՝ կապ, ստորակապ, համակապ, առկապ, բառ-մասնիկ, և չորս եղանակավորող՝ ձայնարկություն, իմացաբերություն, եղանակ(ակ)ան, երանգական:

Այն հանգամանքը, որ խոսքի մասերի խմբերը համաչափ չեն բաշխվում, բացատրվում է նրանով, որ 1) դասակարգումը կատարելիս նկատի են առնված ոչ թե բոլոր իմաստակիր միավորները, այլ միայն ինքնուրույն բառային արժեք ունեցողները, 2) խմբավորումը կատարված է ոչ թե «զուտ» իմաստային չափանիշով, այլ ըստ կաղապարային դիրքի, 3) շմանրատելու նպատակով որոշ խմբեր միացված են, և, ընդհակառակն, իմաստով հարաբերակից որոշ բառային միավորներ ըստ կաղապարային դիրքի տարբերակված:

Խոսքի մասերի փոխհարաբերությունը ավելի ակնառու դարձնելու համար դիմենք փոխակերպական քերականության մեջ գործածվող բանաձևերի տիպի բանաձևերի, բայց 1) նկատի առնենք կապակցվող՝ գործառապես լրիվ խմբերը, 2) խումբ բառի փոխարեն օգտագործենք շարույթ բառը, որ կաշող է նշանակել ինչպես խումբն ամբողջությամբ, այնպես էլ միայն գերադաս անդամը, 3) միադասական կապով կապված (ոչ պարտադիր) մասերը դնենք փակագծերի մեջ, 4) → նշանով տվյալ դեպքում նշանակենք ոչ թե փոխակերպե-

¹⁰ Հնարավոր է նաև հարակալ տերմինը (երանգականը շեշտում է իմաստային կողմը, հարակալը՝ կաղապարային բաշխումը):

լիությունը, այլ սահմանային ծավալվածությունը¹¹, կստացվեն հետևյալ բանաձևերը.

- 1) $\Phi \rightarrow \text{Ան} + \text{ակ} + \text{Ան}$
- 2) $\text{Ան} \rightarrow \text{Գն} + \text{հկ} + \text{Գն} + \text{սկ} + \text{Կն} + \text{հկ} + \text{Կն}$
- 3) $\text{ն} \rightarrow \text{ԳՇ} + \text{հկ} + \text{ԳՇ} + \text{ԲՇ} + \text{սկ} + \text{ԳՇ} + \text{հկ} + \text{ԳՇ}$
- 4) $\text{ԳՇ} \rightarrow ((\text{Դ} + \text{հկ} + \text{Դ}) \text{ԹՇ} + \text{հկ} + \text{ԹՇ}) \text{ԱՇ} + \text{հկ} + \text{ԱՇ}) \text{Գ}$
- 5) $\text{ԲՇ} \rightarrow (\text{ՄՇ} + \text{հկ} + \text{ՄՇ}) \text{Բ}$
- 6ա-գ) $\text{ԹՇ} \rightarrow (\text{Մկ} + \text{հկ} + \text{Մկ}) \text{Թ}, \text{ԱՇ} \rightarrow (\text{Մկ} + \text{հկ} + \text{Մկ}) \text{Ա},$
 $\text{ՄՇ} \rightarrow (\text{Մկ} + \text{հկ} + \text{Մկ}) \text{Մ}$
- 7ա-դ) $(\text{բմ}) \text{Գ}, (\text{բմ}) \text{Ա}, (\text{բմ}) \text{Բ}, (\text{բմ}) \text{Մ}$

Եղսնակավորող բառային միավորների դեպքում կունենանք հետևյալ սխեմաները.

- 3) $(((\text{ձ})\text{ի})\text{եղ})\text{ն}$
- 3ա-է) $(\text{եր})\text{Գ}, (\text{եր})\text{Ա}, (\text{եր})\text{Բ}, (\text{եր})\text{Դ}, (\text{եր})\text{Ա}, (\text{եր})\text{Մ}, (\text{եր})\text{Մկ}$

Այս բանաձևերում կապա-հարաբերական բառերն առնված են երկու հարաբերվող կողմերի հետ միասին: Եթե առնենք միայն մեկ կողմը, ապա կունենանք որոշ հարացույցներ (այս բառի լայն իմաստով). առկապները կկազմեն անկախ (երբեմն էլ գերադաս) նախադասություններ, ստորակապները՝ կախյալ (ստորադաս, երկրորդական) նախադասություններ, կապերը՝ գոյականական շարույթների հարացույցներ: Եթե ավելի լայնացնենք ճարացույց բառի իմաստը և ընդգրկենք նաև բառ-մասնիկներն ու եղանակավորող բառերը, նախադասություններն առնենք միասնաբար և տարբեր խոսքի մասերում ուղեկցվելու դեպքերը դիտենք որպես միևնույն հարացույցի դրսևորումներ, ապա կստացվեն հարացույցային հետևյալ շարքերը¹².

- 1) $((((\text{ձ})\text{ի})\text{եղ})\text{ակ})\text{սկ})\text{ն}$
- 2) $(\text{հկ})\text{ն}/\text{Շ}/\text{Բ}$
- 3) $(\text{կ})\text{ԳՇ}$
- 4) $(\text{բմ})\text{ԳԱՄԲՄՄ}$
- 5) $((\text{Դ})\text{ԹՇ})\text{ԱՇ})\text{Գ}$
- 6) $(\text{ՄՇ})\text{Բ}$
- 7) $(\text{Մկ})\text{Ա}/\text{ՄՄԹ}$
- 8) $(\text{եր})\text{Գ}/\text{Ա}/\text{Թ}/\text{Դ}/\text{Բ}/\text{Մ}/\text{Մկ}$

Խոսքի մասերի քննությունն ավարտենք անտարրորոշության (սինկրետիզմի), փոխանցման, փոխակերպման և փոխարկման գաղափարների քննությամբ, առանց որոնց անհասկանալի կմնա մի շարք միավորների (դերանունները, դերբայները և այլն) բնույթը, այլև մութ կմնան խոսքի մասերի տեսությունը մի շարք կողմեր:

1) Անտարրորոշությունը տարբեր խոսքի մասերի ձևական շտաբերակավածությունն է. միևնույն բառերը առանց ձևական տարբերության կարող են

¹¹ Օգտագործենք նաև հետևյալ կրճատումները. Φ —պարբերություն, ն —նախադասություն, Ան —անկախ նախադասություն, Գն —գլխավոր նախադասություն, Կն —կախյալ նախադասություն, Շ —շարույթ, ձ —ձայնարկություն, ի —իմացարկություն, եղ —եղանական, եր —երանգական:

¹² Հարացույցի լրացական՝ տվյալ ճշմբքն (լայն առումով) հարացույցը կազմող մասերն առնվում են փակագծերի մեջ, | նշանը, ցույց է տալիս ազատ փոխարկելիությունը (այսինքն՝ համակապները կարող են կազմել և՛ նախադասությունների, և՛ շարույթների, և՛ բառերի հարացույցներ), Մ-ը ունի կամ-ի արժեք:

հանդես գալ որպես տարբեր խոսքի մասեր և կաղապարում գրավել տարբեր դիրքեր. հայերենում այդպիսի շտարբերակվածություն կա զգալի թվով ածականների և մակբայների (հմտ. լավ), մակբայների և մակկրացականների (հմտ. առնվազն), գոյականների և ածականների (հմտ խավար), գոյականների, ածականների և մակբայների (հմտ. սխալ), գոյականների և կապերի դեպքում (հմտ. մամաճակ և այլն), լեզվի վարգացման ամեն մի փուլում էլ հնարավոր են անտարրոշության դեպքեր, երբ բառերը դեռ լիովին չեն բաշխվել եղած խմբերի միջև, հատկապես չեն տարբերակվել համապատասխան վերջավորությունների, գործառական ածանցների ու օժանդակ բառերի միջոցով:

2) Փոխանցումը արտաքնապես մոտ է անտարրոշությանը, բայց ավելի խոր քննության դեպքում հանդես է բերում արմատական տարբերություն: Եթե անտարրոշությունը պայմանավորված է լեզվական ենթահամակարգի պատմական զարգացման անհամաչափությամբ, ապա փոխանցումը բխում է լեզվի գործառության բնույթից, բառերի՝ իրենց հիմնական գործառության հետ միասին երկրորդական գործառությամբ հանդես գալու անհրաժեշտությունից, այս դեպքում նշանների բանակը սահմանափակելու և խնայողություն անելու լեզվի բնական միտումից: Անտարրոշության դեպքում բառի մեջ հավասարապես դուգակցվում են տարբեր գործառությունները, փոխանցման դեպքում մեկը գերակշռում է: Բառերը կարող են գործառապես տարբերակված լինել, բայց փոխանցման ենթարկվել. այսպես, կարմիր-ն ածական է, կարմրությունը-ը գոյական, բայց կարմիր-ը կարող է առանց ածանցի էլ հանդես գալ գոյականի գործառությամբ: Այսպիսով, խոսքի մասային փոխանցումը բառի համար սովորական, նրա հիմնական գործառությամբ որոշվող կաղապարային դիրքի փոփոխությունն է: Երբեմն փոխանցումը կարող է ուղեկցվել հիմքի մասնակի փոփոխությամբ (հմտ. երկու մառդ, բայց երկուսը, մի ֆանի մառդ, բայց մի ֆանիսը): Փոխանցման ամենից ավելի սովորական զրոհումը գոյականացումն է. գոյականի լրացումները կարող են հեշտությամբ խոսքի մասային փոխանցման ենթարկվել՝ արտահայտելով կամ հատկապես ահույնը (հմտ. կարմիրը աչքի լույսը գույն է), կամ հատկանիշը՝ զեղչված գոյականի նկատառումով (հմտ. սպիտակ շրջագծեսար մաշվեց, կարմիրը՝ ոչ):

3) Փոխարկումը միևնույն կաղապարային դիրքում տարբեր բառերի միմյանց փոխարինելն է: Փոխարկմամբ որոշվում է բառերի կաղապարային-գործառական մերձավորությունը, բայց ոչ «զուտ» իմաստային-իմացաբանական կարգը: Այսպիսով, եթե մենք հաստատել ենք տվյալ լեզվի խոսքի մասային կաղապարում նրանց հաջորդման բնական կարգը, ապա հեշտությամբ կարող ենք բառերն ըստ խոսքի մասերի դասակարգել փոխարկման միջոցով: Խոսքի ընթացքում խոսողները կատարում են կաղապարային անընդհատ փոխարկումներ: Լեզվաբանն այդ բանը կատարում է գիտակցաբար՝ բառերի խոսքի մասային պատկանելությունը որոշելիս:

4) Փոխակերպումը նախադասության կամ նրա մասերի գործառական այնպիսի փոխանցումն է, որ ուղեկցվում է քերականական համապատասխան նիշերով և փոխարինումով (փոխարկումով): Դերբայի (լայն առումով) զանազան տեսակները ոչ այլ ինչ են, եթե ոչ դիմավոր բայի գործառական

փոխակերպումներ, որոնք նրան հնարավորություն են տալիս հանդես գալու գոյականի, ածականի և մակբայի գործառույթյամբ՝ զնում է→զնալ(ը), զնա-ցող, զնալիս¹³: Ընդհանուր եղանակավորող բառային միավորները կարելի է դիտել որպես համապատասխան նախադասությունների (այսպես կոչված, վերնախադասությունների) գործառական փոխակերպումներ՝ բառային փոխարկմամբ՝ Նս ցավ եմ զգում, որ...→Ա՛խ, Նս ժխտում եմ, որ...→Ո՛չ, Նս րեակեմ եմ համարում, որ...→Բնակեմարա:

Այս կապակցությամբ հարկավոր է կանգ առնել դերանվան վրա, որի էությունն է համարվում այլ խոսքի մասերին փոխարինելը: Իրականում կարելի է նշել, որ փոխարկական գործառույթյունը (հմմտ. միմյանց և այլն) բոլոր դերանունների էությունը չէ. կարելի է խոսել անունների (մակբայ-ների) և շատ դերանունների փոխադարձ փոխարկելիության մասին՝ ըստ աուսրկանների նշանային, թե իրադրական տարբերակման պահանջի: Դերանունների խոսքիմասային դիրքը որոշելիս հնարավոր է երկու մոտեցում՝ կամ դրանք բաշխել թվականների, ածականների, գոյականների ու մակբայ-ների վրա և տարբերակել ըստ իրադրականության ու փոխարկայնության, կամ, նկատի առնելով, որ դերանունների գործառական մի տեսակը («դերանվանական ածականը») ինքնուրույնաբար հանդես է գալիս գոյականական շարույթի մեջ որպես բաղադրիչ, դրա հիման վրա այն տարբերել որպես խոսքի մաս և մյուս դեպքերը բնեւ ըստ փոխանցման և փոխարկման: Ըստ կաղապարային մոտեցման մենք ընտրել ենք երկրորդ ուղին: Մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում նշված են հետևյալ հիմնական «դերանվանական ածականները» («դերանվանական որոշիչները»)՝ ի՞նչ, ո՞ր, այս, այդ, այն, նույն, այլ, ուրիշ, բոլոր, (ամբ)ողջ, ամեն, մի: Սրանցից առաջին երկուսը, գոյականանալով և հաղորդակցային իրադրու-թյունից անցնելով կոնտեքստային իրադրության, հանդես են գալիս որպես արաբերական դերանուններ, այսինքն՝ կաղապարի մեջ գրավում են շաղկապների տեղը (որ շարժվե՞ր դեպի այդ երկու բազմամասի բաղաձեռն...): Հարցական և ցուցական տեսակները համապատասխան գործառական մասնիկներով, հոդառությամբ և փոխարկմամբ կարող են հանդես գալ գոյակա-նի, ածականի, թվականի, մակբայի, մակբայացականի կաղապարային դիրքե-րում (հմմտ. այսքան զեղեցիկ տներ, այսպիսի տներ, այս (=սա), այսպես քալում է, այսքան արագ քալում է և այլն): Ոչ դերանվանական որոշիչների գոյականացումը մյուս խոսքի մասերի համեմատությամբ ունի որոշ առանձ-նահատկություններ. հմմտ. ի՞նչը, ո՞րը, այս (=սա), այդ (=դա), այն (=նա), նույնը, ուրիշը, բոլորը, ամբ(ողջ), ամենքը, մեկը (ավելացնենք մյուսը, որի օգնությամբ կկազմվեն փոխադարձ դերանունները՝ մեկը մյուսին, միմյանց, իրար): Գոյականական այս, այդ, այն դերանունները կարող են փոխարկվել սա, դա, նա և սրանք, դրանք, նրանք դերանուններով. անձնական դերանուն-ները կարող են դիտվել իբրև սրանց փոխարկական տարբերակներ:

¹³ Այս մասին տե՛ս մեր «Հայերենի անդեմ բայաձևերը («դերբայները»)» հոդվածը («Բան-բեր նրանի համալսարանի», 1973, № 3):

КЛАССИФИКАЦИЯ ЧАСТЕЙ РЕЧИ ПО СТРУКТУРНОЙ МОДЕЛИ

Г. Б. ДЖАՅԿՅԱՆ

Академик АН Арм. ССР

Резюме

На основании построения модели естественной последовательности слов в армянском языке выделяются шестнадцать частей речи: I. семь «полнозначных», выступающих в качестве членов предложения: 1) существительное (goyakap), 2) прилагательное (asakap), 3) числительное (t'vakap), 4) местоимение (derapun), 5) глагол (bay), 6) наречие (makbay); 7) «приопределяющее» (mak'ras'akap); II. пять связочно-реляционных: 8) предлог-послелог (kap), 9) подчинительный союз (storakap), 10) сочинительный союз (hamakap), 11) контекстно-соединительные слова (afkap), 12) слова-частицы (ba' masnik); III. четыре модальных: 13) междометие (japnarkut'yun), 14) утвердительно-отрицательные слова (Imac'arkut'yun), 15) собственно-модальные слова (модальные слова, относящиеся к предложению) (ue'apakap) и 16) «оттеняющие» слова (модальные слова, относящиеся к «полнозначным» словам) (ue'angakap). В конце статьи в связи с классификацией частей речи обсуждаются понятия: 1) синкретизма, 2) перехода (транспозиции), 3) субституции и 4) трансформации, выясняется место причастных форм и местоимений в общей системе частей речи.